

**ԵՐԿՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ՝ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱԿՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ**

Հովսեփ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

*Ռազմավարական եւ Ազգային Հետազոտությունների Հայկական Կենտրոնի
տնտեսության եւ Սփյուռքի հարցերով փորձագետ*

aratsagency@yahoo.com

Երկքաղաքացիություն. Տնտեսական և Մոցիալական հետևանքները
ՀՄՔՀԽ համագումար

Հունիսի 17-18, 2006թ.

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան

ԵՐԿՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ՝ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱԿՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Սույն հոդվածը 2003թ. ՌԱՀՀԿ-ի կողմից լույս ընծայած «Հայաստան 2020. Զարգացման եւ անվտանգության ռազմավարություն» ՌԱՀՀԿ 2002թ. հետազոտությունների ժողովածույուն տեղ գտած մեր «ՍՓՅՈՒՌՔԻ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀՍՏԱԿԵՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐ» ԵՐԿՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ» աշխատության փոփոխված եւ լրամշակված տարբերակն է, որում քննարկվում են երկքաղաքացիության ընդունման համար խոչընդոտ հանդիսացող այնպիսի հիմնախնդրի լուծման ուղիները, ինչպիսին է երկքաղաքացիների ժամկետային զինվորական ծառայությունը ՀՀ զինված ուժերում:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երկքաղաքացիության հարցը բազմակողմանի եւ ընդգրկուն խնդիր է, որի լուծումը, սակայն, վաղ թե ուշ պետք է գտնվի: Այս հարցը օրակարգ է մտել 1991թ.՝ Հայաստանի անկախացման առաջին իսկ տարում:

Երկքաղաքացիության ընդունման անհրժեշտությունը մերժողները բերում են մի շարք փաստարկներ.

1. Պետությունը՝ որպես նախ եւ առաջ որոշակի տարածքային կազմավորում, պետք է ծառայի այդ տարածքում մշտապես բնակվող բնակչության կամքի արտահայտմանը եւ կենսագործմանը: Այդ իսկ պատճառով այլ երկրում բնակվող, առավել եւս՝ այդ երկրի քաղաքացիությունն ունեցող անձինք չեն կարող Հայաստանի Հանրապետության պետական ընտրովի մարմիններում ընտրելու¹ եւ ընտրվելու իրավունք ստանալ:
2. ՀՀ քաղաքացիների համար ՀՀ ազգային զինված ուժերում ժամկետային ծառայություն անցնելու պարտադիր լինելը: Այս խնդիրն, իրոք, ամենաբարդ եւ անլուծելի թվացողներից է: Ի վերջո, արդյո՞ք երկու երկրի քաղաքացիություն ունեցող հայը իրավունք կունենա ընտրել, թե դրանցից ո՞ր մեկի բանակում է ծառայելու: Եվ եթե անգամ չխոսենք այն մասին, թե հայրենասիրության ներկա մակարդակի պայմաններում (թե՛ Հայաստանում եւ թե՛ Սփյուռքում) հայերի ո՞ր մասը կնախընտրեր ծառայել ՀՀ ազգային բանակում, ստիպված ենք գոնե պարզել՝ արդյո՞ք այլ երկրները կհամաձայնեն, որ քաղաքացիները ծառայեն ոչ թե իրենց, այլ մի օտար երկրի բանակում:
3. Խնդրահարույց է Հայաստանի ու որեւէ այլ երկրի միջեւ երկքաղաքացիության ընդունման փոխադարձ լինելու հանգամանքը: Այս պարագայում, եթե որեւէ զարգացած երկրի հետ նման համաձայնագիր կնքվի, դա կարող է բազմաթիվ հավելյալ բարդություններ եւ իրավական խճճված իրավիճակներ ստեղծել, բացի այդ՝ Հայաստանի բնակչության արտագաղթի լրացուցիչ խթան հանդիսանալ:

4. Անորոշ են երկու երկրների քաղաքացիություն ունեցող, արտասահմանում բնակվող եւ այնտեղ էլ տնտեսական գործունեություն ծավալող անձանց հարկման (դիցուք՝ եկամտահարկ) դրդապատճառները եւ մեխանիզմները:

5. Հայաստանում արտասահմանցիներին, անգամ եթե նրանք հայեր են, առանց որեւէ սահմանափակման եւ խոչընդոտի հող ձեռք բերելու իրավունքի շնորհումը որոշակիորեն կարող է սպառնալ ՀՀ անվտանգությանը եւ տարածքային ամբողջականությանը, քանի որ ՀՀ համապատասխան պետական մարմինների կողմից ավելի դժվար կլինի վերահսկել երկքաղաքացիություն ունեցող, սակայն արտերկրում բնակվող ՀՀ քաղաքացիներին սեփականության իրավունքի շահարկումները օտար ուժերի կողմից:

6. Ըստ միջազգային նորմերի՝ մարդը պարտավոր է ամբողջությամբ (բացառություններ կարող են լինել միայն ընտրական իրավունքի, մասնավորապես՝ ցենզերի պարագայում) ընդունել այն երկրի օրենքները, որի քաղաքացին ուզում է դառնալ: Օրենքը խտրականություն չի կարող դնել:

Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացի լինելը Սփյուռքի հայերի համար նախ եւ առաջ խորհրդանշական եւ բարոյական բնույթ ունի, կարելի է առաջարկել, որ ընդունվի երկքաղաքացիության այնպիսի ձեւ, որի դեպքում որոշակի չափանիշների համապատասխանող եւ իրենց վրա որոշ պարտավորություններ վերցնելու պատրաստ, այլ երկրի քաղաքացի հանդիսացող Սփյուռքի հայերին անհատական ընտրության հիման վրա շնորհվի ՀՀ քաղաքացիություն, սակայն՝ սահմանափակ իրավունքներով:

ՀՀ օրենսդրությամբ այսօր սահմանված են օտարերկրացիների՝ ՀՀ տարածքում գտնվելու ժամանակավոր, սովորական, հատուկ եւ բացառիկ կարգավիճակներ: Այս կարգավիճակները, մեր կարծիքով, ինքնին մոտ են երկքաղաքացիության այն կարգավիճակին, որը ՀՀ անվտանգության համար նվազագույն ռիսկեր է պարունակում: Սակայն հատուկ եւ բացառիկ կարգավիճակներ ունեցողների համեմատ՝ երկքաղաքացիներին անհրաժեշտ է տալ հավելյալ իրավունքներ եւ պարտավորություններ:

Երկքաղաքացիության հիմնահարցը մտահոգում է ոչ միայն հայերին: Հետաքրքիր է դիտարկել նաեւ այլ երկրների փորձը երկքաղաքացիության ընդունման հարցում, դիցուք՝ Լատվիայի, Բրազիլիայի, Հնդկաստանի եւ հատկապես Ռուսաստանի, որի դիրքորոշումը Հայաստանի համար խիստ էականներից է, քանի որ հենց այս երկրում բնակվող հայերի մի զգալի մասը, համապատասխան օրենքների եւ երկու երկրների միջեւ երկկողմ պայմանագրերի ստորագրման դեպքում կարող են համալրել երկքաղաքացիների շարքերը:

Արեւելյան Եվրոպայում տեղի ունեցած «թավշյա» հեղափոխությունների, ԽՍՀՄ փլուզման եւ Մերձբալթյան երկրների, Ուկրաինայի ու Բելոռուսի անկախացումից հետո, ԱՄՆ-ում այդ երկրների շահերը պաշտպանող եթնիկ լոբբիների համար «ԽՍՀՄ-ի կողմից կեղեքված» ժողովուրդների պաշտպանության խնդիրը անցավ պատմության գիրկ: Սակայն այդ լոբբիները ԱՄՆ-ի՝ ժողովրդավարական վարչակարգերի պաշպանությանն ուղղված արեւելյանեվրոպական քաղաքականության համար դարձան աջակցության

հզոր ներքին գործոն: Այդ աջակցությունը ընդունում է ամենատարբեր ձևերը՝ ֆինանսական միջոցների հավաքագրումից, զանազան հիմնադրամների ստեղծումից, կրթական, մշակութային եւ ձեռներեց նախաձեռնությունների սկզբնավորումից մինչեւ իրենց նախնիների հայրենիքի քաղաքական, տնտեսական եւ մշակութային կյանքում անմիջական մասնակցությունը: Վերջինը հնարավոր է դարձել շնորհիվ Արեւելյան Եվրոպայի մի շարք երկրների կողմից ներգաղթյալների եւ նրանց ժառանգների համար քաղաքացիության եւ ընտրական իրավունքների վերականգնման: Օրինակ, Լատվիայում անկախության ընդամենը 1,5 տարվա ընթացքում ավելի քան 8700 լատվիական ծագում ունեցող ամերիկացու երկքաղաքացիություն է շնորհվել: Նրանցից ոմանք նույն տարվա հունիսից մասնակցեցին խորհրդարանական ընտրություններին եւ ընտրվեցին Լատվիայի Սեյմ:

Մեկ այլ օրինակ է, թե ինչպես է Բրազիլիայի կառավարությունը շահագրգռում երկիրը լքած քաղաքացիներին չխզել հայրենիքի հետ կապը, այլ ավելի ամրապնդել այն, պահպանել ազգային-մշակութային ավանդույթները: Այսպես, 1995թ. նոյեմբերի 8-ին Բրազիլիայի նախագահ Կորդոզոն հայտարարել է արտասահմանում բնակվող հայրենակիցների աջակցության կառավարական հատուկ ծրագրի ընդունման եւ գործի դրման մասին: Ըստ այդ ծրագրի, այլ միջոցառումների շարքում նախատեսվում էր նաեւ ստեղծել հատուկ հիմնադրամ՝ արտասահմանում բնակվող բրազիլացիների կողմից հայրենիքում բնակարանների գնման պլանների վարկավորման նպատակով, մտցնել զեղչ գներ ազգային ավիաուղիների ծառայություններից օգտվող այն բրազիլացիների համար, որոնք այցելում են Բրազիլիան իրենց արձակուրդներին: Փորձագետների կարծիքով, Բրազիլիայի կառավարության կողմից նման ծրագրի ընդունման հիմնական նպատակը բրազիլացի արտագաղթածների խրախուսումն է՝ հայրենիքում կատարվող ֆինանսական ներդրումների ավելացման ուղղությամբ:

Ռուսաստանի սահմանադրությամբ երկքաղաքացիությունը թույլատրված է: Ղա իր մեջ պարունակում է հեռահար նպատակներ. այդ երկրի քաղաքական շրջանակներում վաղուց է քննարկվում արտասահմանում բնակվող ռուսների եւ ռուսալեզուների ներուժի օգտագործման նպատակով երկքաղաքացիության կարգավիճակի ընդունման հարցը: Այդ քննարկումը խթանում են նախ եւ առաջ հետխորհրդային որոշ հանրապետություններում ապրող ռուսալեզու բնակիչները: Մասնավորապես, ինչպես ցույց են տվել էթնոքաղաքական հետազոտությունները, Ղազախստանի ռուս բնակչությունը այդ երկրում իր դիրքերի ամրապնդումը պայմանավորում է երկու խնդիրների լուծմամբ՝ ռուսերեն լեզվին պետական կարգավիճակի շնորհում եւ քաղաքացիության հարցերի լուծում (երկքաղաքացիության կամ երկրորդ քաղաքացիության ընդունում):

Երկքաղաքացիության մասին օրենքի ընդունման դեմ հիմնական փաստարկներից մեկը, ինչպես արդեն վերը նշել ենք, այն է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացի չի կարող լինել մի սփյուռքահայ, ով չի ծառայել (չի ծառայելու) ՀՀ զինված ուժերում:

Ռազմական գործողություններին Սփյուռքի մասնակցության հարցերով հայկական նորաստեղծ պետությունը ընդհանրապես չէր զբաղվում, քանի որ կար ոչ թե մարդուժի այլ նյութական եւ տեխնիկական սակավություն: Այլ է

իրավիճակն այժմ: Հայաստանի պաշտպանության եւ անվտանգության ապահովման գործուն արդեն մոտ ապագայում սփյուռքահայությանը մասնակից դառնալու հնարավորություն տալու նպատակով պետությունը պետք է օր առաջ ձեռնամուխ լինի համապատասխան մեխանիզմների մշակմանը, որոնց մի-քանի տարբերակներ բերվում են նաեւ սույն աշխատանքի շրջանակներում:

ԼԱՏՕ-Ի ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏՄԱԽԱՆՈՂ ՍՓՅՈՒՌՔԱՅԱՅ ԶՈՐԱՄԱՍ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Երկքաղաքացիության մասին օրենքի ընդունման դեմ հանդես եկողների այն մտավախությունը, որ անհնար է ստեղծել որեւէ գործուն մեխանիզմ՝ երկքաղաքացիների՝ ՀՀ ազգային բանակում ծառայելու համար, եւ որ անգամ եթե Հայաստանի (ներառյալ Արցախի) անվտանգության համար իրական սպառնալիք առաջանա, ապա որեւէ երաշխիք չկա, թե ՀՀ երկքաղաքացիները իրենց անմիջական ֆիզիկական մասնակցությունը կբերեն Հայաստանի սահմանների պաշտպանությանը, մեր կարծիքով դժվար է միանշանակորեն ընդունել: Եւ արցախյան ազատամարտի օրերին այս հարցում ձեւավորված փորձի մատնանշումը որպես նման մտավախության հիմնավորում սխալ կլինի ծանրակշիռ համարել:

Այս խնդրի քննարկման համար անհրաժեշտ է նախ պայմանավորվել, որ երկքաղաքացիության, ինչպեսեւ ազգային-պետական մյուս բոլոր հիմնախնդիրների լուծման ելակետ անհնար է ընդունել այն բարոյահոգեբանական իրավիճակը, որը տիրում է Հայաստանում եւ անմիջականորեն անդրադառնում է նախ նոր, ապա նաեւ ավանդական սփյուռքահայության վրա եւ որն ունի հետեւյալ բնութագրիչները.

- իշխանությունների եւ նրանց հովանավորյալ տնտեսական խմբավորումների կողմից կոռուպցիայի եւ այլ տեսակի անօրինականությունների իրականացման համատարած եւ տեւական բնույթը եւ դրանց վերածումը կանոնի, որը հետզհետե խթանում է ամբողջ հասարակության կոռումպացման խորացումը,
- հայրենասիրության անկումը խիստ ցածր մակարդակի,
- ժողովրդավարական մրցակցային ընտրական մեխանիզմների չգործելը, հասարակական անտարբերությունը եւ հուսալքությունը, սոցիալական ակտիվության գրեթե զրոյական մակարդակը, քաղաքացիական հասարակության առավել գործուն տարրերի, այդ թվում ընդդիմադիր կուսակցությունների հետապնդումը իշխանությունների կողմից, որի արդյունքում քաղաքացիական հասարակությունը չի կայանում, իսկ քաղաքացիները մնում են օտարված պետական կառավարման գործընթացից,
- ստվերային տնտեսության հսկայական ծավալները, որի հետեւանքով խորանում է սոցիալական բեւեռացումը, սոցիալական անարդարությունը եւ սոցիալական լարվածությունը,
- կոռուպցիայի ահագնացող չափերը ՀՀ ազգային բանակում, որի արդյունքում հսկայական հարված է հասցվել բանակի մարտական պատրաստվածությանը եւ մարտունակությանը,
- Հայաստանի միջազգային քաղաքական վարկի եւ հեղինակության շարունակվող անկումը,
- Մի կողմից ազգային-ավանդական, ներառյալ ազգային-ազատական եւ մյուս կողմից՝ արեւմտյան-ժողովրդավարական արժեքների հիման վրա

նոր ազգային մշակույթի եւ ազգային արժեհամակարգի սինթեզման գործընթացի խցանվածությունը դրա հիմնական խնդրիչի՝ հայաստանյան հեռուստատեսությունների անազատության եւ գործող իշխանություններից բացարձակ կախվածության պատճառով:

Ակնհայտ է, որ որպես երկքաղաքացիության խնդրի լուծման ելակետ նման բաղադրիչներ ունեցող մերօրյա բարոյա-հոգեբանական իրավիճակն ընդունելը ոչ միայն անընդունելի է, այլ պարզապես անհնար, ինչպես անհնար է տուն կառուցել ամպերի վրա: Այսպիսով ցանկացած ծրագրային մշակում պետք է մշակվի մի այնպիսի իրավիճակի համար, երբ վերացված կլինեն վերը թվարկված բաղադրիչները: Դա հավասար չափով վերաբերում է երկքաղաքացիության խնդրին ու հատկապես դրա բաղադրիչ հանդիսացող ժամկետային զինվորական ծառայությանը: Կոն ֆուցիոսը գտնում էր, որ ցանկացած բանակի՝ հաղթանակի հասնելու համար անհրաժեշտ նվազագույն երեք պայմաններն են սնունդը, զենքը եւ ոգին, նվազագույն երկուսը՝ զենքը եւ ոգին, նվազագույն մեկը՝ ոգին: Ներկայիս պայմաններում, երբ Հայաստանի ժողովրդի ոգին պարբերաբար եւ հետեւողականորեն կոտրվել է՝ 1996-ին, 1998-ին, 1999-ի հոկտեմբերի 27-ին, 2003-ին, 2004-ի ապրիլի 12-13-ին եւ 2005-ի նոյեմբերի 27-ին՝ խոսել որեւէ ազգային-պետական խնդրի լուծման հնարավորության մասին ավելորդ է: Մնում է հուսալ, որ ճշմարիտ էր հայտնի փիլիսոփան, երբ ասում էր, որ «ոգու վերքերը բուժվում են՝ չթողնելով սպիներ»: Լուծումներ կարող են լինել միայն ազգային-պետական զարթոնքի-վերածնունդի արդյունքում: Քանի դեռ պատվաբեր է ոչ թե ՀՀ ազգային բանակում ծառայելը, այլ ինչ-ինչ ճանապարհով այդ ծառայությունից խուսափել «հաջողելը», երկքաղաքացիությունը ոչ միայն չի ներգրավի ազգային բանակի կազմում սփյուռքահայերին, այլեւ կդառնա հայաստանցի երկքաղաքացիների՝ ծառայությունից խուսափելու նոր միջոց:

Այս ամենից զատ, ազգային բանակում ծառայության իրավական եւ հոգեբանական խնդիրները քննարկելիս անհրաժեշտ է բաժանել հավանական երկքաղաքացիներին ավանդական եւ նոր սփյուռքահայերի, ապա նաեւ ըստ բնակության տարածաշրջանների, որպեսզի դրանցից յուրաքանչյուրի դեպքը դիտարկվի առանձին:

Նոր եւ ավանդական Սփյուռքի ներկայացուցիչ երկքաղաքացիների հավանական ծառայությունը ՀՀ ազգային բանակում

1988-1993թթ. արցախյան ճակատում մարտնչած սփյուռքահայերի թիվը խիստ սահմանափակ է եղել: Սակայն այն հանգամանքը, որ անգամ այդ փոքրաթիվ մարդկանց զգալի մասը վառ արտահայտված հայրենասիրական զգացմունքների հետ մեկտեղ տեր էր արտակարգ ռազմական հատկությունների եւ հրամանատարական տաղանդի, թույլ է տալիս ենթադրել. շատ այլ սփյուռքահայ հայրենասերներ, որոնք միգրացե պակաս փորձ եւ հմտություններ ունեին ռազմական գործում, սակայն կցանկանային մասնակցել մարտական գործողություններին, դա չեն արել այս կամ այն օբյեկտիվ խոչընդոտների պատճառով:

Երբ ավելի առարկայորեն ենք դիտարկում արցախյան ազատամարտին սփյուռքահայերի մասնակցության հանգամանքները, գալիս ենք այն

համոզման, որ 1988-1994թթ. այդ մասնակցության ցուցանիշները չեն կարող հիմք հանդիսանալ այնպիսի եզրահանգման, թե այսուհետ էլ սփյուռքահայերը ամբողջությամբ զերծ են մնալու Հայաստանին ռազմական սպառնալիքի դեպքում ՀՀ զինված ուժերի կազմում մարտական գործողություններին մասնակցելուց: Հիշենք արցախյան ազատամարտի տարիները եւ դիտարկենք թե՛ այն հանգամանքները, որոնք նպաստեցին սփյուռքահայերի մասնակցությանը արցախյան ազատամարտին եւ թե՛ նրանք, որոնք խոչընդոտեցին դրան:

Նպաստող հանգամանք էր, որ 1988-1993թ.թ. Հայաստանի բնակչության ստվար մասը գտնվում էր հայրենասիրական զգացմունքների գագաթնակետին, որն այժմ ընդունված է անվանել «88-ի ոգի»: Դա, թեեւ ավելի փոքր չափով, թողնում էր իր ազդեցությունը նաեւ Սփյուռքի վրա: Փոքր չափով, քանի որ շփումը եւ փոխադարձ տեղեկատվական հոսքերը աննշան էին եւ հիմնականում միջնորդավորված էին միջազգային տեղեկատվական սուբյեկտների, ՁԼՍ-երի կողմից: Դրա հետ մեկտեղ, պայմանավորված գորբաչովյան վերակառուցմամբ եւ միջազգային հարաբերություններում սկզբնավորված լիցքաթափման («ՐՈԶՐ՝ՊՍՈ») գործընթացներով, եւ, առավել եւս, ԽՍՀՄ-ի՝ այդ «չարիքի կայսրության» փլուզումից հետո, տասնամյակների միջուկային վախից ազատված Արեւմուտքի լայն հասարակական շրջանակները համակված էին խիստ լավատեսական, անգամ ռոմանտիկ տրամադրություններով, թե շուտով ամբողջ աշխարհում տիրելու է համատարած խաղաղությունը, ժողովրդավարությունը եւ բարգավաճումը: Այս էյֆորիան իր բացասական ազդեցությունը թողեց զարգացած երկրներում ապրող սփյուռքահայերի մասնակցության վրա արցախյան ազատամարտին, որոնք առանց այն էլ, ի տարբերություն մերձավորարեւելյի սփյուռքահայերի առավել կտրված էին (եւ են) ազգային արմատներից: Ինչպես գիտենք, սփյուռքահայ ազատամարտիկների մեծ մասը մերձավորարեւելյի էր գոնե ծնունդով:

Մերձավորարեւելյի հայերի պարագայում նպաստավոր հանգամանք էր, որ այն տարիներին Հայաստանը նրանց մեծամասնության կողմից դեռ դիտվում էր որպես «Ավետյաց երկիր», առավել եւս, որ աշխարհի խոշորագույն 2 գերտերություններից ԽՍՀՄ-ը, որի մեջ մտնում էր Հայաստանը, ջերմ-բարեկամական հարաբերություններ ուներ այս տարածաշրջանի հայաշատ արաբական երկրների հետ: Իսկ 88-ի երկրաշարժի կործանարար հարվածներից հետո, թուրքական շրջափակման պայմաններում, Հայաստանի ծանր ազատագրական պայքարին անմասն չմնալու մղումը, թվում է, պետք է գոնե մերձավորարեւելյի սփյուռքահայ մարտիկների շարքերը հասցներ ոչ թե տասնյակների, այլ հազարների: Եվ հիմքեր կան պնդելու, որ այդպես էլ կլինեք, եթե չլինեք այն գլխավոր խոչընդոտը, որը խանգարեց դրան՝ ԱՆԿԱԶՄԱԿԵՐՊՎԾՈՒԹՅՈՒՆԸ: Երկրաշարժից կիսավեր երկիր, նոր-նոր ձեւավորվող պետականություն, քայքայված եւ չաշխատող տնտեսություն, արտաքին աշխարհի հետ հարաբերվելու խիստ դժվարություն՝ շրջափակման հետեւանքով: Այս պայմաններում երիտասարդ երկրի նոր-նոր ձեւավորվող իշխանությունները ամենաքիչը մտածում էին մարտական գործողություններին սփյուռքահայության մասնակցությունը կազմակերպելու մասին:

Վերջապես, անգամ 1992թ.-ից հետո, երբ խորհրդային բանակը սկսեց դանդաղորեն Հայաստանին հանձնել այստեղ տեղակայված ԽՍՀՄ զորամիավորումների սպառազինությունները, հայ կամավորական ջոկատներին

Խիստ չէին հերիքում զենքն ու զինամթերքը: Չէին հերիքում նաեւ փոխադրամիջոցներն ու վառելանյութը (պահեր եղան, երբ շրջափակման հետեւանքով վառելանյութը Արցախ էր տաղափոխվում ուղղաթիռներով): Այդ պատճառով անգամ հայաստանյան կամավորական ջոկատներում հավաքագրվածների միայն մի մասն էր մասնակցում ռազմական գործողություններին: Իսկ, ընդհանուր առմամբ, մինչեւ կանոնավոր բանակի մարտական գործողությունների ասպարեզ իջնելը ռազմաճակատում կռվող մի քանի հազար հայաստանցի ֆիդայիները (եթե չհաշվենք բուն դարաբաղցիներին) կազմում էին Հայաստանի 18-55 տարեկան արական սեռի բնակչության (700.000-900.000 մարդ) միայն աննշան, անգամ խորհրդանշական տոկոսը:

Նման պայմաններում ոչ-ոքի մտքով անգամ չէր անցնում Սփյուռքից ազատամարտիկներ ներգրավել: Այն սփյուռքահայերն էլ, ովքեր այդուհանդերձ, եկան եւ մասնակցեցին ազատամարտին, դա արեցին ի հեճուկս բազմաթիվ խոչընդոտների: Իսկ նրանցից շատերն էլ զոհվեցին ռազմի դաշտում:

Այսպիսով, 1988-93թ.թ. մարտական գործողությունների ընթացքում Հայաստանը մարտիկների պակաս չի զգացել, ի տարբերություն Ադրբեջանի, որը պետական մակարդակով կազմակերպում եւ ֆինանսավորում էր էր աֆղան, չեչեն, ռուս եւ ուկրաինացի հազարավոր վարձկանների ակտիվ ներգրավում:

Պատերազմական գործողությունների սկզբնական շրջանում ռազմաճակատի համար մարդուժի պահանջարկը լրացվում էր ինքնապաշտպանական ջոկատներում կամավորների հավաքագրմամբ, իսկ երբ մարտական գործողությունները հասան որակական նոր մակարդակի, այդ պահանջարկը լրացվեց Ազգային բանակ ժամկետային զինծառայողների զորակոչի եւ պահեստային զինծառայողների եռամսյա հավաքների միջոցով:

Ռազմական գործողություններին Սփյուռքի մասնակցության հարցերով պետությունը ընդհանրապես չէր զբաղվում հետեւյալ պատճառներով.

1. Նորանկախ պետականությունն ինքը դեռ թույլ էր, եւ նոր-նոր էին ձեւավորվում պետական կառույցները (իսկ պետական մտածողությունը, ինչպես հարկն է, չի ձեւավորվել մինչեւ օրս էլ):
2. Հայաստանում չէր զգացվում Սփյուռքի ֆիզիկական մասնակցության անհրաժեշտությունը:
3. Ավանդական կուսակցությունների հանդեպ ՀՀ իշխանությունների կողմից ինչ-ինչ պատճառներով որդեգրած զգուշավոր-կասկածամիտ (անկախ այն բանից, որ դրա համար կային որոշակի հիմքեր), հաճախ էլ՝ քամահրական վերաբերմունքը մեխանիկորեն տարածվեց Սփյուռքի մի ստվար հատվածի վրա (հատկապես՝ Մերձավոր Արեւելքի):
4. ՀՀ իշխանությունները Սփյուռքի մասնակցությունը Հայաստանի Հանրապետության կայացման եւ Արցախյան հիմնախնդրի լուծման հարցում տեսնում էին միայն ֆինանսական եւ մասնագիտական ուղրտներում: Ընդ որում, եթե արտաքին քաղաքական ուղղությունը եւ էներգետիկան ղեկավարելու համար Սփյուռքից հրավիրվեցին հիմնականում ամերիկահայեր՝ Րաֆֆի Հովհաննիսյան², Ժիրայր

Լիպարիտյան, Նիկոլ Շահգալդյան, Վարդան Օսկանյան, Սեպուհ Թաշճյան, ապա ռազմական բարձրագույն սպայակույտը համալրվեց ռուսաստանցի հայ գեներալներով՝ Նորատ Տեր-Գրիգորյանց, Միքայել Հարությունյան, Վաղարշակ Հարությունյան, Վլադիմիր Հայրապետյան եւ ուրիշներ:

Ինչ վերաբերում է ֆինանսական ոլորտին, ապա նույն այդ անկազմակերպվածությունը եւ պետական ռազմավարության բացակայությունը թույլ չտվեցին հավուր պատշաճի օգտագործել Սփյուռքի հսկայական ֆինանսական կարողությունները³ («Հայաստան» հիմնադրամի գործունեությունը լոկ կաթիլ էր չօգտագործված հնարավորությունների օվկիանոսում): Եվ դա այն դեպքում, որ այդ տարիներին Սփյուռքը հակված էր լայնածավալ ռազմական օգնություն ցուցաբերել⁴:

Անգամ այսօր, երբ այս հարցում պետական հոգածությունը չի գտնվում անհրաժեշտ մակարդակի վրա, իսկ 88-ի համազգային զարթոնքը վաղուց արդեն անցյալ է դարձել, Հայաստանի տնտեսության զարգացման գործում Սփյուռքի ֆինանսական ռեսուրսների ներգրավման (այդ թվում՝ ներդրումների ձեռով) մակարդակը շատ ավելի բարձր է, քան այն տարիներին, այլ ոչ թե հակառակը: Սա եւս մեկ անգամ ապացուցում է, որ 1988-93թթ. Հայաստանի Հանրապետության կայացման գործընթացներին, այդ թվում՝ ռազմական ոլորտում, Սփյուռքի մասնակցության աննշան չափերը որեւէ հիմք չեն տալիս մեզ հեռուն գնացող եզրակացություններ անել, թե անգամ Հայաստանի Հանրապետության կողմից համապատասխան մեխանիզմներ ձեւավորվելուց հետո էլ Սփյուռքը կմնա նույնքան օտարված Հայաստանից, որքան այսօր է:

Վերադառնալով արցախյան հակամարտությանը, անհրաժեշտ է նշել, որ միայն մեր ունեցած տվյալներով՝ արտաքին Սփյուռքի առնվազն 10 երկրներից եկած հայեր են մասնակցել մարտերին: Այդ երկրներն են. Լիբանան, Սիրիա, Իրան, ԱՄՆ, Ֆրանսիա, Արգենտինա, Մեքսիկա, Հունաստան: Հասկանալի պատճառներով չենք անդրադառնում ներքին Սփյուռքի այնպիսի երկրներին, ինչպիսիք էին Ռուսաստանը, Վրաստանը, անգամ Ուզբեկստանը եւ Լիտվան: Նշված երկրներից մարտերին մասնակցել են ոչ միայն բազմաթիվ հայեր, այլ նաեւ այլազգի կամավորներ՝ ռուսներ, կազակներ, լիտվացիներ եւն: Ավանդական Սփյուռքից ազատամարտի մասնակիցների մեծ մասը լիբանանցի կամ իրանցի հայեր էին: Իր դերն է խաղացել այն, որ վերջիններիս մեջ առավել թիվ էին կազմում ռազմական փորձ, պատրաստություն ունեցողները կամ նրանց ժառանգները (ռուսները կասեին «վառողի հոտն առած էին»): Դրան նպաստել էին Լիբանանում տեղի ունեցած քաղաքացիական եւ Իրան-Իրաք պատերազմները:

Այսպիսով կարելի է հանգել եզրակացության, որ Հայաստանի պաշտպանության եւ անվտանգության ապահովման գործում արդեն մոտ ապագայում սփյուռքահայությանը մասնակից դառնալու հնարավորություն տալու նպատակով պետությունը պետք է օր առաջ ձեռնամուխ լինի համապատասխան մեխանիզմների, իսկ հասարակությունը, այդ թվում ՋԼՄ-ները՝ համապատասխան մշակույթ ձեւավորեն:

Նախ եւ առաջ անհրաժեշտ է կազմակերպել սփյուռքահայ երիտասարդների մարտական պատրաստականության ուսուցանումը: Մենք առաջարկում ենք

այդ նպատակով Հայաստանում ստեղծել հատուկ նշանակության զորամաս, որտեղ, ՀՀ-ից ժամկետային զինծառայության համար զորակոչված քաղաքացիների հետ մեկտեղ, առայժմ կամավոր հիմունքներով (քանի դեռ պարզ չէ, թե երկքաղաքացիությունը ինչ տեսքով է ընդունվելու), զինծառայություն կանցնեն սփյուռքահայեր տարբեր երկրներից: Քանի դեռ լուծված չէ երկքաղաքացիության հարցը, արտասահմանյան երկրների հետ դիվանագիտական լարվածություն չառաջացնելու նպատակով այս զորամասը կարող է կոչվել ռազմահայրենասիրական ճամբար, իսկ ՀՀ-ից ժամկետային զինծառայողներին դրանում կարող են փոխարինել, դիցուք, նախագորակոչային տարիքի պատանիները: Սակայն այն պետք է ունենա մարտական զորամասին բնորոշ բոլոր հատկանիշները: Նման զորամասում սփյուռքահայերի «ծառայությունը» սկզբի համար կարող է սահմանվել 3 կամ 6 ամիս: Կարելի է նաեւ, որ այս զորամասում մարտական ստորաբաժանումները (ջոկ, դասակ, վաշտ եւն) համալրվեն խառը հիմքերով. դա հայության տարբեր հատվածների ներկայացուցիչներին հնարավորություն կտա շփվել, ճանաչել միմյանց, մերձենալ հայաստանակենտրոն միասնական ազգային գերակայությունների եւ պատկերացումների շրջանակներում:

Հետագայում, երկքաղաքացիությունը ընդունելուց, արդեն կունենանք ՀՀ Ազգային բանակում սփյուռքահայերի ծառայության նախադեպ, փորձ, հայտնի կդառնան դրա հետ կապված բարդությունները, կերելակվեն դրանց լուծման ուղիները: Բացի այդ, հնարավոր կլինի որոշակիացնել երկքաղաքացիների զին. ծառայության տարիքային սահմանները, տարիքն անցնելու դեպքում պարտադիր մուծումների չափերը եւ, հնարավոր կլինի խոսել նաեւ որոշ կատեգորիաների դեպքում կիրառվելիք տուգանքների մասին:

Նույն դիվանագիտական ճկունությունն ապահովելու նպատակով այդ զորամասը (կամ արդեն զորամասները) հետագայում էլ կարող են չմտնել ՀՀ ՊՆ համակարգի մեջ, այլ ընդգրկվեն քաղաքացիական պաշտպանության համակարգում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման հարցում օրըստօրե ուժգնանում է արտաքին վեկտորների դիվերսիֆիկացման հրամայականը, եւ դրա ադյունքում՝ ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունների սերտացման անհրաժեշտությունը, նման մի ճամբար-զորամասը ցանկալի կլինի ձեւավորել ՆԱՏՕ-ի չափանիշներին համապատասխան, իսկ որպես խորհրդատուներ ներգրավել ԱՄՆ-ի, Ֆրանսիայի եւ ՆԱՏՕ-ի անդամ այլ երկրների զինված ուժերում ծառայող հայազգի հայրենասեր սպաների: Դա նաեւ լրացուցիչ ազդակ կլինի Հայաստան-ԱՄՆ եւ Հայաստան-ՆԱՏՕ ռազմաքաղաքական համագործակցության ուղղությամբ՝ իր բոլոր բարերար հետեւանքներով Հայաստանի ոչ միայն ռազմական, այլեւ ֆինանսատնտեսական անվտանգության ապահովման գործում: Լինելով ՀՀ զինված ուժերում սփյուռքահայ երկքաղաքացիների ներգրավման միջոց՝ այս գործողությունները առավել ընկալելի կլինեն նաեւ Հայաստանի ռազմական մեկ այլ գործընկերոջ՝ Ռուսաստանի համար: Հայաստանում արեւմտյան չափանիշներին համապատասխանող նման մի զորամասի/երի ստեղծմանն ուղղված գործողությունները կարող են դառնալ Հայաստան-ՆԱՏՕ անհատական գործակցության առաջիկա տարիների գործողությունների պլանի (IPAP) բաղկացուցիչ մասը:

Կարելի է վստահաբար պնդել, որ ժողովրդի կողմից ընտրված ՀՀ հաջորդ՝ ժողովրդավարական իշխանությունները կկարողանան երկքաղաքացիներին ՀՀ զինված ուժերում ծառայության մեջ ներգրավելու այս ձեւը հավուր պատշաճի, ընկալելի եւ ընդունելի դիվանագիտական լեզվով ներկայացնել տարածաշրջանում շահագրգռություններ ունեցող բոլոր երկրներին:

ՈՎ ԿԱՐՈՂ Է ԴԱՌՆԱԼ ԱՅՍ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿԸ

«Հայաստան» համահայկական հիմնադրամի ստեղծումից եւ Հայ Առաքելական եկեղեցու երկու թեւերը միավորելուն ուղղված ջանքերից հետո Հայաստան-Սփյուռք խորհրդաժողովը ՀՀ իշխանությունների երրորդ փորձն է՝ ուղղված աշխարհի հայերի համախմբմանը Հայաստանի շուրջ: Սակայն եթե առաջին նախաձեռնությունը կարելի է շատ թե քիչ հաջողված համարել, ապա չանդրադառնալով երկրորդի տապալման պատճառներին, անհրաժեշտ ենք գտնում փաստել, որ երրորդի՝ Հայաստան-Սփյուռք խորհրդաժողովի ստեղծման գլխավոր (գոնե հռչակված) նպատակները այդպես էլ մնացին թղթի վրա: Այն կարել է համարել Սփյուռքի հետ Հայաստանի հարաբերությունների սերտացման լոկ իմիտացիայի միջոց:

Հայաստան-Սփյուռք առաջին եւ երկրորդ խորհրդաժողովների մասնակիցների բոլոր փորձերը կառուցվածքային գործուն մեխանիզմներ, «միս ու արյուն» հաղորդել այդ նախաձեռնությանը փշրվեցին՝ բախվելով ՀՀ իշխանությունների հարուցած խոչընդոտների պատին: Խորհրդաժողովների մասնակիցների թվաքանակը ցույց էր տալիս, որ դրանց աշխատանքները առավել արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ էր կիրառել աշխատանքային առնվազն երկու ձեւաչափ: 2-3 հազար հոգով որեւէ գործնական որոշում ընդունելն անհնար է: Դա կարող է տեղի ունենալ միայն մասնագիտացված խմբերի՝ նախապես մշակած որոշումների նախագծերի առկայության դեպքում, որոնք առնվազն 2-3 ամիս առաջ պետք է բաժանվեին մասնակիցներին, դրվեին հանրային քննարկման: Ինչպես գիտենք, սա էլ տեղի չունեցավ. Համաժողովի մասնակիցներին որեւէ փաստաթուղթ, անգամ Հռչակագրի տեքստը նախապես չբաժանվեց⁵: Ժամանակի խիստ սահմանափակության հետեւանքով, մասնակիցներից շատերը անգամ չկարողացան արտահայտվել:

Մինչդեռ այս խորհրդաժողովը իր մեջ մեծ քաղաքական եւ տնտեսական ներուժ է պարունակում: Սփյուռքահայությանը վերաբերող ցանկացած լուրջ որոշում, որը Հայաստանի Հանրապետությունը կկայացնի Սփյուռքը ներկայացնող նման մի կառույցի հետ համատեղ՝ մեծ ոգեւորության եւ համախմբման խթան կդառնա հատկապես ավանդական Սփյուռքի համար: Այդպիսի մի որոշում կարող էր լինել հակաիրաքյան կոալիցիայի՝ Իրաք ներխուժումից առաջ այդ երկրի հայության կազմակերպված էվակուացման-հայրենադարձության համատեղ իրականացումը՝ Հայաստանի եւ Սփյուռքի ջանքերով: Մոտ ապագայում՝ Հայաստանում ժողովրդավար իշխանությունների ձեւավորումից հետո նման մի որոշում կարող է դառնալ Հայաստանում վերը նկարագրված գորամասի/երի ստեղծումը, ուր համատեղ ժամկետային զինվորական ծառայություն կանցնեն ՀՀ քաղաքացիներն ու երկքաղաքացիները:

Ինչ վերաբերում է Հայաստան-Սփյուռք խորհրդատվորդի ձեռնարկին, ապա երկքաղաքացիության մասին օրենքի ընդունումից հետո այն եւս ակներեւաբար պետք է փոխակերպվի:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ Մեր կարծիքով այն վտանգը, թե արտասահմանյան այն երկրները, ուր կկենտրոնանան առավել թվով ՀՀ երկքաղաքացիներ ընտրական գործընթացներն ուղղորդելու միջոցով կկարողանան ազդել Հայաստանի Հանրապետության ներքաղաքական իրավիճակի վրա խիստ չափազանցված են: Փորձը ցույց է տալիս, որ այդ երկրներում (Ռուսաստան, ԱՄՆ) բնակվող անգամ ՀՀ լիիրավ քաղաքացիները, որոնց թիվը իրար հետ վերցված անցնում է 1,5 միլիոնից ընդհանրապես չեն մասնակցում Հայաստանի համապետական ընտրություններին: Այսպես, 2003թ. նախագահական ընտրություններին ԱՄՆ-ում մասնակցեցին շուրջ 2000, իսկ Ռուսաստանում՝ դրանից էլ քիչ ՀՀ քաղաքացիներ:

² Բացի մասնագիտական կարողություններից Հայաստանին է նվիրաբերել նաեւ զգալի ֆինանսական միջոցներ. Հայաստանում 1992թ. գոյություն ունեցող ֆինանսական ճգնաժամի պայմաններում նորաստեղծ արտաքին քաղաքական ամբողջ գերատեսչության ծախսերը առաջին 6 ամիսների ընթացքում հոգացել է իր անձնական եւ իր ընտանիքի կողմից տրամադրված միջոցների հաշվին: Հրաժարվելով ԱՄՆ քաղաքացիությունից՝ ստացել է ՀՀ քաղաքացիություն:

³ ՌԱՀՀԿ-ի կատարած ամենամոտավոր հաշվարկներով ամբողջ սփյուռքահայության ձեռքում որպես սեփականություն կենտրոնացված նյութական, այդ թվում ֆինանսական կապիտալը կազմում է 400 - 500 000 000 000 (չորս հարյուրից հինգ հարյուր միլիարդ) դոլար: Այսպես. անգամ 1915թ. աղետից հետո Թուրքիայում մինչ այժմ մնացած 30000-անոց հայ-քրիստոնյա համայնքին են պատկանում (ամենահամեստ հաշվարկներով) 4-5 մլրդ դոլարին համարժեք նյութական եւ հոգեւոր արժեքներ: 5000 հոգին չգերազանցող եգիպտահայ համայնքի պարագայում այդ թիվը 3-4 մլրդ դոլար է, Երուսաղեմի հայ համայնքի, այդ թվում՝ Հայոց Պատրիարքարանի պարագայում այդ թիվը, ըստ տարբեր փորձագիտական գնահատականների, տատանվում է 8-12 մլրդ դոլարի միջակայքում: Այս խնդրին մանրամասն անդրադարձել ենք մեր **«Սփյուռքահայ զաղթօջախների եւ համայնքների ֆինանսական կապիտալի, ինովացիոն-տեխնոլոգիական եւ մտավոր ներուժի հաշվառում, քարտեզագրում եւ դասակարգում»** աշխատության մեջ («Հայաստան 2020. Անվտանգության եւ զարգացման ռազմավարություն», ՌԱՀՀԿ, ք. Երեւան, 2003թ.):

⁴ Հեղինակավոր Finansial Times թերթը 1994թ. սեպտեմբերի 16-ի համարում տպագրած Հայկական սփյուռքի ռեւանշը հոդվածում լրագրող Սթիվ Լե Վինը գրում է. «...հիմնական օգնությունը սփյուռքը հատկացնում է ռազմադաշտի համար... Հայաստանին զենքով ու զինամթերքով օգնելու հիմնական աջակիցը սփյուռքի տարբեր խմբերն են: Սակայն աջակցության ամենաափշեցուցիչ առանձնահատկությունը կամավոր մարտիկների առկայությունն է»:

⁵ Այս մասին տես մեր **«Ազգային համաշխարհային կառույց եւ Սփյուռքի կառավարելիության խնդիր. Հայկական գործոնի ձեւավորում: Հայաստան-Սփյուռք համաժողով. աշխարհի հայությանը միավորելու փորձ»** աշխատության մեջ («Հայաստան 2020. Անվտանգության եւ զարգացման ռազմավարություն», ՌԱՀՀԿ, ք. Երեւան, 2003թ.):